

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

(ՔԱՂՈՒԱԾՔ)

ՀԱՅՔ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՈՒՆԵՑԱԾ ԵՆ ՄԻՇՏ

Յարգելի Ուս. Կոնիքերի՝ «Բանասիրի» մէջ (սեպ. 1904) համառօտիւ դիտել կու տար՝ թէ Հայք ի հնումն եպիսկ. ձեռնադրութիւն չեն ունեցած։ Ուսուցչապետին այս կարծիքը, բոլորովին նոր՝ Հայոցս համար, շատ հապճեպով կազմուեցաւ և հրապարակ հանուեցաւ։ Ի դէպ էր ուրեմն որ ընդդիմութեան բախէր մեր կողմանէ, ինչպէս ըրաւ Լոյսի պատուակ. խմբագրութիւնը (5 մարտ 1905)։ Այս պատասխանը սակայն այնպիսի հանգամանք մ'ունէր, որ անգղիացի բանասէրը քաջաւերուեցաւ երկրորդ անգամ և քան իւր ընդդիմախօսն աւելի յաջող կերպով պաշտպանելու իւր կարծիքը (Բանաս. յունիս 1905)։

Երկու վիճող կողմանք ուրիշ կուտան չունէին՝ բաց ի գրչագիր Մաշտոցաց, Ուսուցչապետը տեսնելով՝ որ իրեն ծանօթ Ս. Ղազարու թ. գարու և 1216ի, Բաբբերինեան 1300ի, Բրիտանական ժՊ դարու կարծեցեալ և 1331ի, 1605ի և 1630ի օրինակաց մէջ կը պակասի եպիսկոպոսական ձեռնադրութիւնը, հետեւցող՝ թէ ի հնումն բնաւ չէ եղած այն, զի « Զերեցող և գոյութիւն չունեցող մարդոց միջև բնաւ տարբերութիւն չկայ »։

Ատոր հակառակ Լոյսը կը ցուցնէր Պոսայ Ազգ. Մատենադարանի երկու օրինակներ, որոնք ունին Նոյն ձեռնադրութիւնը։ Մին՝ « բոլորգիր, բարակ մագաղաթի վրայ », որ ըստ իրեն՝ « կրնայ ժամանա-

կակից ըլլալ » հայագիտին 1216ի օրինակին։ Բայց այդ՝ ինչպէս կ'երեւի թուիք մ'է լոկ։ Երկրորդը՝ ժե դարու սկզբան, որ Լոյսի կարծեօք՝ հանուած է Լամբրոնացոյն օրինակէն, ըստ յիշատակարանի մը՝ թէ « զոսայ զշարադրութիւնս հայրապետացն Հայոց », գրեալ ձեռամբ սուրբ Հօրն մերոյ Ներսիսի արքեպիսկոպոսի Տարսնի, և ետու գրել աստ, որ է այս »։ — Բայց « Շարադրութիւն հայրապետացն Հայոց » Մաշտոցէն զատ գործ մը գիտեմ ես, զոր Ս. Ղազարու 1345ի Մաշտոցն ալ ունի. — և զայս Լամբրոնացոյն օրինակէն գաղափարելը՝ չի նշանակեր ձեռնադրութեանց կարգերուն ալ ընդօրինակումն անտի։ Դարձեալ ինք Լոյսն ալ գիտէ՝ թէ Տ. Կոնիքեր եպիսկ. ձեռնադրութիւնը շարադրուած կը համարի Առաքել վարդապետէն ժ.Գ դարուն։ Ապա քան զայս թուական նորագոյն գրչագրաց մէջ անոր գոյութիւնը չի կրնար հակադրել Ուսուցչապետին կարծեանց։

Ձարմանալի է սակայն՝ որ երկու ընդդիմախօս կողմերն ալ պահ մը կ'անգիտանան, թէ մենք Մաշտոցներէն զատ և անոնցմէ ալ հին՝ պատմիչներ ունինք, որոնցմէ խնդրելի էր առաջնոց զլացած Լոյսը։ Ասոնց վրայ հաստատուած՝ պիտի ցուցնեմ ես, նախ՝ թէ եպիսկոպոսութիւնը քահանայութենէն զատ աստիճան մ'էր առ մեզ, Երկրորդ՝ թէ եպիսկոպոսութեան ուրոյն ձեռնադրութիւնը կար ի սկզբանէ։ Երրորդ՝ թէ ինչո՞ւ կը պակասի այն հին գրչագրաց մէջ։ Զորրորդ՝ պիտի պատասխանեմ Տ. Կոնիքերի քանի մը ձեռնարկութեանց։

Ա. — Ուսուցչապետը կը խոստովանի՝ թէ « չեմ ըսեր որ Հայերն իրենց եկեղե-

ցւոյ սկզբնաւորութեան ժամանակէն չին ունեցած եպիսկոպոս . . . այլ ըսել կ'ուզեմ՝ թէ երկու (եպս. և քահ.) կարգերու համար ալ հոգեւորական միակ աստիճան կար: Կրօնական բոլոր յարաբերութեանց մէջ ալ քահանայն հաւասար եղած է եպիսկոպոսին »:

Սակայն մեր պատմութիւնը բնաւ իրաւունք չի տար անզոյ. բանասիրին՝ ըստ բազում գլխոց:

1. Եւ տառաձիւն անուններ տուած է այդ երկու աստիճանաւորաց, և երբեք եպիսկոպոսը երիցուն կամ երէցը եպիսկոպոսին հետ չէ շփոթած: Լուսաւորիչ կը սահմանէ « եպիսկոպոս . . . զկարգս երիցունց և կամ սարկաւազաց » (Ազաթանգեղոս Ճիֆ): Վարդանանց օրով Արտաշատու մէջ ժողով կը խմբեն « եպիսկոպոսք և բազում քորեպիսկոպոսք՝ և ի պատուական երիցունց և աւագ վանականք բազումք » (Փրպ. Իֆ): Մեծն Վարդան աշխարհին վիճակին վրայ խորհելու համար կը ժողովէ « զպատուական եպիսկոպոսս և զականաւոր երիցունս » (անդ, ԼԲ): « Բեւել հրամայեցին նախարարքն Հայոց սուրբ եպիսկոպոսացն և երիցանց զԱւետարանն » և երդուան (անդ): Թէ՛ Շղիշէ (յեղ. Ը) և թէ՛ Փարպեցին (ԽԷ) Թուկով Ղեւոնդանքը, մեզ ծանօթ սահմանները կու տան անոնց. « Յովսէփ կարողիկոս, Սահակ եպիսկոպոս, Ղեւոնդ երեց, Մուշէ երեց », և այլն:

2. Կոչումներէն զատ՝ աստիճաններն ալ տարբեր են: Լուսաւորիչ երկուքն ալ առաւ անջատաբար ի կենարիւ. ժողովեցան հոն եպիսկոպոսիւն « զի ձեռնադրեցն զսուրբ Գրիգորիոս՝ աւանդեալ ի նա զպատիւ խնայողութեան քահանայարեանն Քրիստոսի, և զարքարտիսն եպիսկոպոսութեան փառաւորութեան Աստուծոյ զպատիւ:

մեծ » (Ազաթ. Ճիֆ): Եւ այն ինքն Լուսաւորիչ կրկին կարգեր կու տայ այլոց. « որ եպիսկոպոսացն յաստիճան ձեռնադրեցան ի նմանէ . . . իսկ զկարգս երիցունց », և այլն (անդ, Ճիֆ): — Ղեւոնդ երէց ի դրան Պարսից խօսելով իւր և ընկերացը մօտին, « զսրբոյն Յովսէփայ ասէր. Զսա զոր տեսանէքս, . . . Գորիս է ամենայն Հայոց քահանայութեանց: Եւ զսուրբն Սահակ ցուցեալ ասէր. Սա զկարգ օծման ըստ ձեռնադրութեան մերոյ օրինաց զիտարեալն ունի. իսկ այլքս և եւ միտպէս եմք ըստ կարգի քահանայարեանն » (Փրպ. ԽԶ): Ահա ուրեմն երկու կարգեր – շահաւորելով կաթողիկոսութիւնը՝ որ մեծագոյն պատիւ մ'է. – մին կատարեալ, զի Սահակ եպիսկոպոս է, և միւսն անկատար՝ զի այլք ըսկ քահանայն: Եւ Յովսէփ « զլուսէ » է եկեղեցւոյ, և Սահակ անոր տո՞րադրեալը. և ասկայն սա ունի կատարեալ կարգը, և ոչ Յովսէփ, զի վերջինս դեռ երեց էր աստիճանով, և իշխանութեամբ միայն կաթողիկոս. « Թէպէտ և երեց էր ըստ ձեռնադրութեանն, այլ զկաթողիկոսութեան Հայոց զաթոռն ունէր » (Փրպ. ԻԲ). կամ « Սուրբ երեցն Յովսէփ, որ և զկաթողիկոսութեանն Հայոց ունէր զաթոռ » (նոյն, ԼԳ): Տ. Կոնիքեր ինքնին կրնայ տեսնել՝ որ « թպեոս և երէց էր, այլ . . . » բացատրութիւնը կը ցուցնէ՝ թէ բուն մը կը պակասէր Յովսէփայ՝ կաթողիկոսութեան պատուոյն լրման համար: Արդ՝ եթէ ըստ հայագիրին՝ « Հայք՝ քահանայի ձեռնադրութենէն դարս՝ չեն ունեցած եպիսկոպոսի շնորհաբեր ձեռնադրութիւնը », Յովսէփ որ արդէն « երէց » կամ « քահանայ » (Խոր. Գ. ԿԷ) էր ձեռնադրութեամբ, և աստիճանով ամենուն « զլուսի », ուրեմն ինչ կը պակասէր իրեն: Յայտնի է թէ՛ եպիսկոպոսական կարգը՝ Եւոնդ Փարպեցին կը պատմէ Աբրահամ « երի.

1. « Քորեպիսկոպոս երկուքն, մի՛ ձեռնադրեալն (եպս.), և մի՛ ոչ », պարզեմ լո՛ք երէց (ՄԻ. Գոշ. Դատ.), թեպէտ էր ի սկզբանէ: Ս. Դանիէլ նոյն տիտղոս ունէր և եպիսկոպոս էր (Քաւ. Գ. ԺԲ). Կիւրիոս նոյն տիտղոսով երէց էր (Ռիսա. Բ. Ա.): Հետեւաբար

քորեպիսկոպոսութիւնն առանձին աստիճան մը չէր, այլ պատիւ մը:

2. Պէտք չէ մոռնալ թէ կարդիկոսական ձեռնադրութիւնն ծառայէր էր նախ ժամանակ մեր հայրապետքը կը ձեռնադրուէին, այս, ըսելով աշխարհականութենէն կամ

ցոյ » համար թէ երկրորդ անգամ « ձեռնադրեալ (լինի) յաստիձան եպիսկոպոսութեան Բզնունեաց » (ԾԼ), Եւ Գիւտ կաթողիկոսին համար՝ թէ « զաման ձեռնադրի յեպիսկոպոսութեան և զայլս բազումս յաստիձան երիցութեան » (ԿԴ)։ Ասորից կը յղեն առ Մովսէս կաթող։ Աշտարակեցի՝ զոմն « Արդիսոյ երեց ի վանաց, ... զի իշխանութեամբ զոր ընկալայց ի Քրիստոսէ, տացէք ձեռնադրութեան զմա », յետ որոյ « Արդիսայի երբեմն քահանայի, իսկ այժմ շնորհին Քրիստոսի եպիսկոպոսի » կ'ըսուի անոր համար (Գիրք Թղթ. 54-5)։ Ահա վերստին կրկին աստիձանք և կրկին ձեռնադրութիւնք։ Վերջապէս անկարելի է ժխտել՝ թէ Հայոց մէջ ի սկզբանէ՝ զատ աստիձան մ'էր եպիսկոպոսութիւնը։

3. Այդ երկու աստիձանաւորաց գործերն ալ տարբեր են։ Եպիսկոպոսն ուղղակի յարաբերութեան մէջ չէ ժողովրդեան հետ, այլ « տեսուչս և առաջնորդս գաւառաց և գիւղից կացոցանելով, որք անուանին քրեպիսկոպոսը », անոնցմով կը կառավարէ քահանայն ու ժողովուրդը (կան. Ս. ՍՀկ.-Սոփ. Բ. 71, և այլն)։ — Եկեղեցական ժողովոց մէջ կաթողիկոսը կը գրէ և կը կնքէ լոկ « եպիսկոպոսակցօք իմով », ինչպէս առ Փոքրն թէոքոս նամակին մէջ (Եղիշ. Գ). զի այլ երիցունք՝ թէպէտ ներկայ, իշխանութիւն չունին ստորագրելու։ — Ներսէս Աշտարակեցւոյ օրով կը կնքուի « ուխտ միաբանութեան », յորում եպիսկոպոսը ու նախարարը միայն կը ստորագրեն (Գիրք Թղթ. 72)։ — Արբանջամ կաթողիկոսի ընտրութեան համար կազմուած ժողովին մէջ գրելու չի կրնար բազմիլ կաթող. տեղապահը Վրթանէս, զի քահանայ է լոկ, այլ

եպիսկոպոսաց երիցագոյնը, և սա է որ հոն ներկայ աստիձանաւորաց հետ կը ստորագրէ. « Ես Մանասէ եպսկ. իմ արտակցօք հանդերձ » (անդ, 149), ու Վրթանէս բնաւ չի յիշուիր հոս։ Ինչո՞ւ այս խտրութիւնը, եթէ Վրթանէս աստիձանով չէր տարբերի եպիսկոպոսներէն, և մանաւանդ եպիսկոպոսութենէն բարձր՝ կաթողիկ. տեղապահութեան պաշտօնն ալ ունէր։ — Մեր պատմութեան մէջ չի յիշուիր բնաւ՝ որ երեց մը կամ երիցունք ձեռնադրութիւն կատարեն. այլ միշտ եպիսկոպոս մ'է ձեռնադրիչը. ինչպէս Լուսաւորիչ Արիստակիսի և այլոց (Ագաթ. ՃԻԴ, ՃԻԲ). Ներսէս՝ Զութիթ երիցու (Բուզ. Դ, ԾԷ). Յովհանն ոմն եպս. ուրիշ երիցու մը (Նոյն, 2, Ը). բոլոր հին ու նոր Մաշտոցաց մէջ, սկսեալ Ս. Ղազարու օրինակէն, « եպիսկոպոս » մ'է խորհրդածուն՝, Ապա երիցունք ստորին էին աստիձանաւ և անկաւորըք ձեռնադրելու։ — Հետեւաբար շատ անձիշտ է Տ. Կոնիքերի խօսքը՝ թէ « կրօնական բոլոր յարաբերութեանց մէջ ալ քահանայն հաւասար եղած է եպիսկոպոսին »։

Բ. - Զատ աստիձանք՝ ձեռնադրութեան զատ կանոններ ալ կ'ենթադրեն։ Քահանային վրայ եպիսկոպոսութիւնն ալ բարդելու համար՝ ստիպեալ երկրորդ անգամ պիտի ձեռնադրուէր, ինչպէս եղաւ Լուսաւորիչի, Արբանջամ Խոստովանողին և Արդիսոյի։ Անտեղի կը լինէր կարծել՝ թէ ձեռնադրութեան մի և նոյն քանաձեւը կը կրկնուէր։ Սարկաւագութեան կանոնը կրկնելով չէ՝ որ այդ աստիձանաւորն երիցութեան կը բարձրանայ, այլ նոր կանոն մը կատարելով, կարգի մը կրկնութիւնը մի և նոյն արդիւնքը միայն յառաջ պիտի բե-

քահանայութենէ եպիսկոպոսութեան բարձրանալու համար, ինչպէս ան Լուսաւորիչը։ Իսկ եթէ արդեն եպիսկոպոս էին, նոր ձեռնադրութիւն չէին ընդունէր։ Այսպէս Ս. Արիստակէս Լուսաւորիչն եպիսկոպոս ձեռնադրուած (Ագթ. ՃԻԴ). յաջորդեց անոր՝ առանց նոր ձեռնադրութիւն մ'ալ առնուլ կենսաբայեան (անդ), ինչպէս ըրին իւր նախորդն ու յաջորդքը։ Կի՞թզեւ. ձեռնա-

դրութիւնը Միջին-դարու գիւտ է, որոյ մասին ուրիշ առթիւ աւելի ընդարձակօրէն։

1. Վերնադասիւնի համեմատ՝ միայն անգագնուաց (գրակարգաց) օրհնութեան մէջ, ուր չկայ ձեռնադրութիւն, խորհրդակատարն է « քահանայն », ինչ որ ուշագրու է նախօրհնութեան համար։

բէ, և ո՛չ աւելի բան մը, Եպիսկ. առանձին ձեռնադրութեան կանոնի գոյութիւնն ալ հաստատելու համար՝ ես չեմ դիմեր գրչագիր Մաշտոցաց, որ դարուն և որքան ալ հին լինին ատոնք: Այլ այդ բոլորէն ալ յատաջ կ'անցնիմ, մինչեւ ժ դարու սկիզբը, և հոն կը հանդիպիմ պատմչի մը, որ աչքովը տեսեր է երեք ուրոյն ձեռնադրութիւն. սարկաւագի, քահանայի և եպիսկոպոսի, և զորս մինչեւ Ե դար կը հանէ: Այդ է Սո. Ասողիկ, որ այսպէս կը գրէ. « Երանելին Յովնան Մանդակունի՝ զՀայոց բազում կարգս ուղղութեան կատարեաց... զկարգս մկրտութեան և զսարկաւագի, զքահանայի և զեպիսկոպոսի » (Բ. Բ):

Ասողիկ իւր պատմութիւնը կ'աւարտէ 1004 թուականին. Եւ ըսի՝ թէ սա հնագոյն է բոլոր ծանօթ Մաշտոցներէն, հետեւաբար նոյն իսկ Ս. Ղազարու երիցագոյն օրինակէն ալ. թէ և Վենետիկոյ Հարցայա Թ դարու համարած են և Ուսուցչապետն անոնց կարծակից կը հանդիսանայ, սակայն ես փաստեր ունիմ զայն յիշեալ դարէն բաւական յառաջ մղելու: Կը շատանամ այդ փաստերէն երկուքը միայն ցոյց տալով. — 1. Թ-Ժ դարուց գրչագրաց քննութենէն կը տեսնենք՝ որ ատոնց մէջ տակաւին պահուած կը մնայ ուղղագրական հին ձեւ մը, այն է օտար անուանքը ոչ թէ յ, այլ ղ տառով գրել: Այսպէս օրինակի աղագու Լազարեան ձեւարանի աւետարանն 887ին և Ս. Ղազարու աւետարանն 902ին գրուած, յորս համակ դատը կ'իշխէ դեռ. այդ, փրդիպպոս, և այլն: Ս. Ղազարու մէկ ուրիշ աւետարանին մէջ՝ 1007ին՝ կը սկսին խառն գործածուիլ ղ և յ. երբեմն մի և նոյն անունն ալ կրկին ձեւով գրուելով, Սաղաթիէդ և ... էյ, և այլն: Հոս մենք կը գտնուինք անցման շրջանին հանդէպ: Եւ երբ կը զննենք ծանօթ հին Մաշտոցն ալ, ասոր մէջ արդէն դատը տեղի տուած է լինին. այլ, փրիպպոս, և այլն: Ուրեմն սա աւելի յետագոյն ժամանակի գործ է: — 2. Սոյն մաշտոցի մէջ կը պակասի հիւան-

դաց օծութեան կանոնը: Մենք Ժ դարու կիսուն գրող Անձեւացեաց Խոսրով եպիսկոպոսէն կ'իմանանք որ իւր օրով դեռ նոր սկսած էր ատոր զանցառութիւնը. « Բայց և զայս զիտեղ պարտ է, կ'ըսէ, զի զիւղն (հիւանդաց) աղօթքն զօրաւոր ասնէ և զեղ բժշկութեան կատարէ. վասն որոյ թէ երկրորդ յինի՛ն բարի է և թէ վասն ծոռոքն և կամ այլ պատճառի իրից օծութիւն իւղոյն խափանի, աղօթիցն լինել պարտ է ատանց ամենայն պատճառի » (ՄԵԼ. Ժմբ. 281): Այսպէս զանցառութիւնը թէեւ այդ դարուն սկսած, այլ ընդհանրացած չէր տակաւին: Իսկ այդպիսի պատճառներ խափանում մը չէր կրնար եկեղեցւոյ պաշտօնական յիսարանէն արտաքսել օծման կարգը. որպէս զի այդ վտարումը պատահէր, հարկ էր որ նախ օծութիւնը խափանուէր հասարակաց սովորութենէն: Իսկ այս բանիս համար՝ Խոսրովէն վերջ գտնէ յիսուն տարւոյ շրջան մը դնելու ենք: Այս հաշուով՝ մեր այդ Մաշտոցը կու թայ զրոնել արդէն ԺԱ դարու սկիզբը, քանեւ կէսն ալ, այն է Գրիգոր Վկայասիրի կաթողիկոսութիւնը: Բայց ոչ աւելի ուշ, վասն զի նախ՝ ձեռնադրութեան օծումն, որ մեր մէջ ԺԱ դարու վերջերը կը յայտնուի և որով Բարսեղ կրթ. զՓոքր Վկայասէր « քահանայ օծեալ » կը պատմուի (Ծնորդ. Վիպ. 552), դեռ կը պակասի սոյն Մաշտոցիս մէջ: Երկրորդ՝ ինչպէս իրավամբ կը դիտէ Հ. Մատթ. Մաղաքեան, Մեծ Վկայասիրին թարգմանած Ոսնուայի կանոնէն տարբեր և հնագոյն ձեւն է սոյն Մաշտոցիս պահածը, և այլն: Ուրեմն Ասողիկ կը մնայ երիցագոյն վկայն՝ որ տեսած է ծանօթ Մաշտոցաց մէջ պակաս, բայց իրապէս գոյութիւն ունեցող եպիսկ. ձեռնադրութեան կարգը, լինի այդ աւելի համառօտ քան նոր ձեւը, ինչպէս են միւս ձեռնադրութիւնք՝ մեր հնագոյն Մաշտոցին մէջ, և աւելի կամ նուազ անմասն քահանայականին: Այս հետազօտութենէն վերջ կրնամ համարձակ յայտարարել՝ թէ եպիսկ. կարգին հին Մաշտոցաց մէջ չլինելը չի նշանակեր նաեւ անոր չգոյութիւնը:

Բայց նոյն իսկ այդ իմաստանաց դէմ զրպարտութիւն մը պիտի լինէր ըսելը՝ թէ անոնց մէջ ընաւ չկայ այդ կարգին յիշատակ : Վասն զի սկսեալ Ս. Ղազարու հնազոյն օրինակէն, բոլորն ալ կը վկայեն քահանայական ձեռնադրութեան մէջ, — զոր նոյն ինքն Տ. Կոնիբեր ալ հրատարակեց Բանաստեղծի մէջ (1904, նոյ. 313), — եպիսկոպոսականին գոյութեանն ալ. « դու (Տէր) յարուցեր ի մօս քահանայապետս, անցուցուցեր քահանայս և դասս սարկաւագաց » : Կաթողիկոսէն զատ՝ քահանայապետ կ'անուանեն զեպիսկոպոսը նաեւ փարպեցիքն էլ զարուն (թղթ. 571), Ստ. Սիւնեցի (Ը դարուն վա. նախերգ. աղ.), Օմեցիքն (119), Լամբրոնացիքն (Մեկ. պտրգ. 84...) և այլք : Գ. — Բայց ինչո՞ւ Մաշտոցները չունին եպիսկոպ. ձեռնադրութիւնը : Իրաւամբ կը պատասխանէ Լոյսը, թէ եւ առանց պատմական ապացոյցի, թէ այդ աստիճանին տալը կաթողիկոսին միայն սեպհական լինելով, կանոնն ալ ըսկ հայրապետանոցին մէջ կը պահուէր : Առ որ Տ. Կոնիբեր կը կրկնէ՝ թէ « երբեք պատճառ մը չկայ, որ գոյութիւն ունեցող ձեռնադրութեան կանոն մ'առանձին պահուի » : Եւստ լաւ բայց ես ալ կը հարցնեմ. եթէ հայագէտը կ'ընդունի՝ թէ գոնէ « ԺԳ դարուն » հնարուած էր այս կանոնն, ինչ պատճառաւ ուրեմն գէթ այդ թուականէն վերջ զբրուած և հայագիրտին ծանօթ երեք օրինակաց մէջ չէ մտեր : Այս ուրեմն ուղիղ է Լոյսի պատասխանը : Ձեռնադրութեան սոյն պայմանին մէջ կը գտնուի և կ'արդարապէս զայս միւտոնի օրհնութիւնն ալ : Ս. Ղազարու երիցազոյն Մաշտոցին մէջ կը գտնենք հետեւեալ կարեւոր ծանօթութիւնը. « Կանոն խորհրդածութեան սուրբ իւզոյն զոր միւտոնն կոչեն . բայց մեք ոչ ի իւնեմք ցրել, զի մի անհնազանդ գտանիցիմք սուրբ Լուսաւորչի աթոռոյն և մեծի հայրապետին մերոյ » :

Ահաւասիկ կանոն մ'ալ, որ կայ և սակայն սովորական մաշտոցին մէջ չի գրտնուիր : Եւ սոյն վկայութենէս կ'իմանանք՝ որ ոչ միայն աւելորդ, այլ նոյն իսկ ար-

գիլուած ալ էր հասարակ Մաշտոցաց մէջ զրել հայրապետին յատուկ այդ երկու օրհնութիւնը : Այդ արգելքը կը մեկնուի այն պարագայով, որ Ժ դարուն քաղկեդոնական կուսակցութեան պատկանող եպիսկոպոսներէն ոմանք՝ խորտուծներ ցոյց կուտային հայրապետին դէմ, ինչպէս Անանիա կաթողիկոսին օրով՝ Սիւնեաց Թակոբ և Անձեւացեաց Խոսրով եպիսկոպոսները, որոնք պահ մը յարեցան իրենց զաղաս փարակից Աղուանից կաթողիկոսին, անկից անհնելով միւտոնն ալ, և զորս Անանիա նզովեց (Որբել. ԺԱ) : — Այդօրինակ ըմբոստութեանց կամ շարագոյն հետեւանաց իսպախման համար՝ օգտակար համարուեցաւ՝ հայրապետական իրաւանց յատուկ յիշեալ կրկնակ կանոնները չտալ հասարակաց ձեռքը :

Ինչո՞ւ գէթ առանձին չի գտնուիր եպիսկ. ձեռնադրութեան հին ձեւը : Ի պատասխանի՝ պիտի հարցնեմ ես ալ. ինչո՞ւ հայ ձեռնադրութեանց հնազոյն ներկայացուցիչը չի գտնուիր ոչ ի Սիւս և ոչ յԷջմիածին, այլ իտալիոյ հեռաւոր մէկ անկիւնը՝ սուրբ Ղազարու մէջ : Եւ եթէ հասարակ Մաշտոցին յատուկ հին կանոնք այսքան հազուապիտ ես, որչափ աւելի պիտի լինէր եպիսկոպոսական ձեռնադրութիւնը, որ հագիւ մէկ երկու օրինակ ունէր հայրապետանոցին մէջ : Եւ որք նոյն կանոնի նոր խորագրութեան յայտնուելովը ԺԳ դարուն՝ բոլորովին պիտի կորնչէին, ինչպէս պատահած է ուրիշ ամէն հին ձեռագրաց, այրուելով կամ նորերու շարագոյնները կերտելով :

Գ. — Տ. Կոնիբեր ուրիշ քանի մի փաստեր յառաջ կը բերէ՝ ըստ երեւութիւն զօրաւորը, որոց հարկ է ինձ անդրադառնալ :

1. (Իրնոսթրիւնաբի ցոյցակին մէջ գրուած է. « իսկ վասն քահանայօրհնեկից՝ սրբոյն Սահակայ է արարեալ յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրում, ի նաւասարդի ամսոյ՝ որ օր մի էր » : Ուսուցչապետը կը խորհրդածէ. « Ինչպէս կը տեսնուի, այստեղ եպիսկոպոսի ձեռնադրութեան խօսք չկայ » : — Դիտել կու տամ յարգ. հա-

յազիրտին, նախ՝ թէ այդ գրութիւնը, հա-
զիւ ժիբ դարուն ծանօթ, մեզ համար որ
և է պատմական արժանիք չունի: Ըսածիս
համոզուելու համար՝ թողլով անոր ուրիշ
հանգամանքները, կը բաւէ ուշ դարձնել
նոյն իսկ ներկայ հատուածիս վրայ, յո-
րում Ս. Սահակ ձեռնագրութեան կանոնը
կը գրէ մէկ աւտար մէջ, գաւաթ մը ջուր
խմելու պէս քան մը: Եւ այն՝ իւր հայ-
րապետութեան առաջին տարին, երբ դեռ
հայերէն գիրն անծանօթ ու լեզուն եկե-
ղեցւոյ մէջ մուտ չէր գործած, և պաշտա-
մունք ուսարարան էին (Փրպ. Ժ): Եւ վեր-
ջապէս հակառակ է Ասողկան, որ աւելի
իրաւամբ Մանդակունեոյն կ'ընծայէ ձեռ-
նագր. կանոնները: — Երկրորդ՝ այստեղ
« քահանայօրհներէ » կրնայ և պարտի նշա-
նակել բոլոր ձեռնագրութիւնը, և ոչ մին
միայն: Ահաւասիկ քան ներկայ Յուցակն
հին մեր ծանօթ Մաշտոցին մէջ՝ քահա-
նայութեան կից կան սարկուսացոյց և կիս
սարկուսացոյց կարգերն ալ, զորս Յուցակը
չի յիշեր, և սակից չի հետեւիր՝ թէ ա-
տորթ ալ զոյտութիւն չունէին: Մեր հարց
ու մեր մտաց մէջ քահանայադիրն եկեղե-
ցական պաշտօնէութեան ընդհանուր կո-
չումն է, որ իր ստորաբաժանմունքն ունի,
եպիսկոպոսութիւն, երիցոյթիւն կամ քա-
հանայութիւն¹, սարկուսագութիւն, և այլն:
Ասոնք քահանայութեան զանազան ստիւ-
նաններն են, որոց մէջ փարպեցեւոյն բա-

ռով « Կատարեայն » է եպիսկոպոսութիւնը,
Մեր Ե դարու մատենագրաց ըով շատ սո-
վորական է այդ երեք աստիճանաց ալ ընդ-
հանուր քահանայ կոչումը տալ. Եղիշէ՝
« քահանայք » (Բ, Է, Ը) և Ղազար « ար-
քահանայք » (Խէ և այլն) կ'անուանեն Ղե-
ւոնդեանքը, որոց մէջ կան եպիսկոպոս,
եպիսկոպոս, երիցունք ու սարկուսագներ:
Յովսէփ կ'ըզ. « զլուիս է ամենայն քահա-
նայութեանց » (Փրպ. ԽԳ). և Փաւստոս տեղ
մը « մեծի քահանայի » կ'ըսէ Լուսաւոր-
չին համար (Գ, Բ): Հեռեւաբար Յուցա-
կին « քահանայօրհներէն » ալ իւր մէջ կը
բովանդակէ բոլոր աստիճանները, եպիս-
կոպոսականն ալ միասին:

2. Իմ այս խորհրդածութիւնս կը զօրէ
նաեւ խոսքովու « քահանայական ձեռնու-
ղրութիւն » (մեկ. Ժմգր. 109) մերկ բացա-
տրութեան մասին, որոյ հետ այլ աստի-
ճանի յիշատակութիւն չկայ:

3. Լամբրոնացին կ'ըսէ, այո՛, թէ « այս
երեք կարգ սարքեպիսկոպոսաց, եպիսկո-
պոսաց և քահանայից՝ թէպէտեւ անուամբ
զանազանին ի միմեանց, բայց սակայն ի
մի դաս և յիշատակութիւն պատուոյ են,
(որ կը կայանայ) կալ շուրջ զԱստուծով
անընդմիջաբար, այսինքն զսրբով սեղա-
նովն » (մեկ. պարգ. 81): Սակայն մենկչիս
այս միացման նպատակն է խմբովին բաղ-
դատել զանոնք ստորին « պաշտօնէից »
հետ, որոնք « ունեւով զմիջնորդն աստուա-

1. Ստեբան՝ Եղիշէի անանուն քննադատ մը Ամս-
շտեիտի մէջ (1906 զեկ. 355) կարծիք կը յայտնէր՝
թէ « նախնիք երեցով կը համբիւային ամուսնացեալ եկե-
ղեցականք, իսկ ամուսնի եկեղեցականք՝ քահանայով »: Եւս
համարիտ չեմ ասոր: Փաւստոսի քով Մամբրէի կու-
սպրեռն փառնայլը « երեք » մ'է (Ի, ԽԳ). « երեք » մ'է
նաեւ. Յովսէփ եպիսկոպոսի ձեռնագրած ամուսնաւոր
երիտասարդը (անդ, Զ, Ը): Արքանա՛մ խոստովանող
« երեք » է ըստ փարպեցեւոյն (ԽԷ, ԽԳ, ԽԸ). և խո-
րեկայ հետ « քահանայք » (ԽԸ, ԽԳ). և գիտեք յի-
շիշեալ թէ Արքանա՛մ « ոչ խառնեցաւ ի կարգս սուրբ
ամուսնութեան » (Ը): Ս. Սահակայ կանոնք կը գրէն
« ամուսնացեաց քահանայից » (Ստի. Բ 110, 113), ո-
րոշելու համար կուսակրօններէն: Այսպիսի շատ օրի.
նակներ կրնայի տալ՝ որոնք կը ցոյցնեն թէ երեք է քա-
հանայ երբեք կապ չունին ամուսնական վիճակին հետ:

Սակայն զիրենք խտորէն դասելով, կը ներկայանան
մեզ իւրեւ պաշտամանց անուններ. երեքը սեպական
է՝ աւագի իմաստով՝ մենաստանի կամ եկեղեցւոյ մը
գլխաւորին, նորագոյն բառով՝ աւագերիցուն. « Տգէտ
երեք եղբարք ժողովորդ մի՛ իշխեացին ունեւ » (կան-
ԽԷ. 31). « Ստուել երեք Աստուծոյ ... Արշէն երեք
Եղեցիկն », և այլն. (Փրպ. ԽԷ): Իսկ քահանայն պաշ-
տանական հանգամանք մը չունի: Պարսից գուռը գնա-
ցող զօրացողին մէջ կան « քահանայք » (Եղիշ Գ.): Ար-
տագու մէջ Ս. Յովսէփայ և Ղեւոնդի հետ կան և բա-
զում և այլ քահանայք » (նոյն, Ի): Վերջապէս այս
գրքին ունին Եղիշէի և Փարպեցւոյ գրեթէ բոլոր ե.
րիցունք և քահանայք ալ: Բայց երկու անունները իրա-
րու տեղ եւս գործածուած են, ինչպէս կ'երեւի վերոյի-
շեալ օրինակաց մէջ:

ծառնակութեան բնմին՝ ոչ ունին համարձակութիւն կամ պատիւ հայել անընդմիջաբար յԱստուած» (անդ)։ Եւ թէ Լամբրոնացւոյն խօսքին մէջ թրուարանական շշուութիւն պէտք չէ փնտռել, յայտնի է իւր յաջորդ աւելի որոշ բացատրութիւնն, յորում եպիսկոպոսն ու քահանայն կը զատուին թէ՛ պաշտօնով և թէ՛ իշխանութեամբ. « քահանայը և երիցունը, մի են երկուքանս ... և զործ է նոցա պատարագ մատուցանել և բաշխել զնոյն ժողովրդեանն, մկրտութիւն անեն և աղօթն մատուցանել, և խաղաղութիւն տալ ժողովրդեանն, առաջնորդել և զմեղս թողուլ, և ոչ յայլ ինչ համարակել, այսինքն ոչ օրհնել սեղան և ոչ վիճակել զոք աստիճանի, զի այս եպիսկոպոսն պատիւ է և իշխանութիւն » (83-4)։

4. Լոնդոնի անթուական Մաշտոց մը կրնայ Ս. Ղազարու երիցագոյն օրինակէն տարբեր՝ որով և նորամուտ՝ աղօթք մ'ունենալ, յորում քսուի քահանային համար՝ « լինել տեսող (կամ տեսուչ) ժողովրդեանը և ասաքնոց քոց սրբակից » . կամ « տուր շնորհս ծառայիս այսմիկ ... առնուլ զպարգեւ զվերականգնութեան » : Կրնայ Ս. Ղազարու օրինակն իսկ քահանայաթաղին մէջ գրել. « վերականգնու մեր որ փոխեցաւ յաշխարհէն՝ դասակից արա զսա և արտակից հարց և հայրապետաց ... զքահանայս զոր կոչեցեր յառաջնորդութիւն ժողովրդեան ըսւմ ... ևսփռել զժողովուրդը » և այլն։ Առ որ դիտել կու տամ՝ թէ վննետկեան օրինակին քահանայաթաղիդ վերնագրին է՝ « Կանոն յորժամ քահանայ վախճանի կամ եպիսկոպոս » . որով յիշեալ բացատրութեանց մէկ մասն վերջնոյս կըրնայ տրուած լինել։ Բայց եթէ միայն քահանային իսկ ընծայուէին, Տ. Կոնիքեր տակաւին իրաւունք չէր կրնար ստանալ այդ հոնտորական ասացութեանց ներքեւ տեսնել յունական եպիսկոպոս (տեսուչ) բառին հումանշերն ու համագործըր։ Քահանայն վերջապէս չէր ու չէ դնապան կամ աւելածու մը եկեղեցւոյ մէջ, այլ ինքն ալ վերականգնու կամ առաջնորդ մ'է, թէև փո-

քրաթիւ ժողովրդեան մը. ուր եպիսկոպոսը, կամ Մաշտոցին բառով՝ հայրապետ՝ պաշտօն ունէր հսկել նոյն ինքն այդ հարց կամ փոքր հովուաց՝ և անոնց ձեռքով ընդհանուր հօտին վրայ։ — « Հայրապետաց » կամ « առաքելոց աթոռակցութիւնն » ալ չի նշանակեր անոնց հաւասար աստիճան և իշխանութիւն։ Քրիստոս ալ ըսաւ իւր աշակերտաց, թէ իւր հետ զահակից պիտի բազմին դատելու զմարդիկ (Մտթ. ԺԺ, 28)։ Բայց աստի չի հետեւիր՝ թէ ուրեմն առաքեալը հաւասար էին Յիսուսի։

5. Յառաջ բերած այսքան փաստերու՝ Հիպպոդիտի կանոնները չեն կարող ստանալ։ Առձեռն չունելով ատոնց բնագիրը, չեմ կրնար որոշ եզրակացութիւն մը հանել, անարան հասած են, թէ մանաւանդ եղծուած, ինչպէս կ'ենթադրէ նոյն ինքն Տ. Կոնիքեր։ Հայերէնն արդէն անիմանալի և խառնակ է։ Բայց այդ վիճակին մէջ իսկ՝ յորում կը ներկայացուին մեզ Ուսուցչապետէն, տակաւին նպաստաւոր են մեր դատին։ 32 կանոնը կ'ըսէ՝ թէ իշխանութիւն ձեռնադրելոյ՝ նմին (երիցուն) ոչ տուեալ է, զոր Հայագէտը կը կարծէ թէ « յետոյ մտած լինելու է » . վասն զի 10 կանոնը կ'ըսէ՝ թէ « մի ոմն ընտրեսցի յեպիսկոպոսաց կամ յերիցանց որ զձեռն ի վերայ գլխին նորին դիցէ » : Եւ ինչու այս « յերիցանց » բառը նորամուտ չէ, այլ միւսը։

Դարձեալ՝ 31 կանոնը՝ թէ « զնոյն աղօթս ի վերայ երիցու մատուցեն զորս ի վերայ եպիսկոպոսին, բայց միայն զանունն թողելով (փոխելով) եպիսկոպոսութեանն », կը ցուցնէ՝ թէ երկու ձեռնադրութիւնը թէև կազմութեամբ նոյն, բայց աղօթից մէջ աստիճանի տարբերութիւնն որոշող բառից փոփոխութիւն մը կը լինէր։ Ուրեմն ահա կրկին կարգեր։ Արդէն մեր Մաշտոցաց մէջ ալ ձեռնադրութեան ընկերող բանաձեւը՝ որ բուն էական աղօթքն է կանոնին, նոյն է սարկաւազութեան, քահանայութեան և եպիսկոպոսութեան համար. ինչպէս կ'ազդարարէ Ս. Ղազարու օրինակը կոչման բանաձեւին համար, « Բայց

միայն զանունն փոփոխեն, թէ ի սարկաւազութենէ ի քահանայութիւն »: Իսկ միւս յարակից քարոզք և աղօթք զարդ են՝ կանոնաց զանգուածն ստուարացնող: Կարելի է՝ թէ եկեղեցւոյ առաջին դարուց մէջ՝ ձեռնադր. կանոնը բոլորովին մէկ էր. սակայն անխտանափելի էր անտեսանց փոփոխութիւնը, որոնց վրայ կը կայանար երեք աստիճանաց տառաքիլադիր զանազանութիւնը, զոր պիտի ցուցնեմ վերջին յօդուածովս:

6. Կը համարիմ՝ թէ Տ. Կոնիբեր եկեղ. հնօրեայ աւանդութեանց անհաւան ողջ ազդեցութենէն՝ քան թէ հնախօսութենէ թելադրուած, կը կրկնէ անտեսանց դար յառաջ Ոյերիոսի յայտած և Կալուկիանաց նորոգած կարծիքը՝ թէ Նոր կոսկարանի մէջ ալ « հոգեւորական բարձր պաշտօնի համար միակ աստիճան մը կար »: Ինչ որ սակայն անհամաձայն է գիտութեան: Նոր կտակարանի մէջ մէկէ աւելի փաստեր ունինք մեր այժմեան կրկին աստիճանաց ի նպաստ: Նախ՝ սովորական է հոն եպիսկոպոս կամ տեսուչ անունը: « Եթէ որ և եպիսկոպոսութեան ցանկայ, բարւոյ գործոյ ցանկայ: Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել » (Ս. Տիմ. Գ, 1-2. Տիմ. Ա, 7). « Հօտիդ՝ յորում եղ զձեզ Հոգին սուրբ տեսուչ » (Գրծ. Ի, 28): — Յետոյ՝ և պիսկոպոսութիւնը տարբեր վիճակ մ'է հոն քահանայութենէն: Պաւղոս կը գրէ Տիմոսին՝ թէ « վասն պիտորիկ իսկ թողի զքեզ ի Կրետէ, զի որ ինչ միանգամ պակաս իցէ՝ ուղղեցես, զի կոչուսցես ըստ քաղաքաց երիցան » (Ս. 5): Ամբողջ Կրետէի հոգեւոր վարչութիւնը Տիմոսի ձեռքն է. իւր հրամանին ներքեւ « երիցունք » ալ կան, զորոս ինք միայն իշխանութիւն ունի ձեռնադրելու: Ահա ուրեմն Տիմոս եպիսկոպոս մ'է, և աստիճանով ալ բարձր միւս երէցներէն: — Նոյն աստիճանն ունի Տի-

մոթէոս ալ, ստացած Պաւղոսէ՝ « ի ձեռնադրութենէ երիցութեան » (Գ, 14. Բ Տիմ. Ա, 6): Սա եւս ունի իրեն հպատակ երեցներ՝ զորս ինք կը ձեռնադրէ (Ս Տիմ. Ե, 22), և որոց դատաւոր ալ է ի հարկին: « Զերիցոս չարախօսութիւն մի՛ ընդ ունիցիս, բայց եթէ երկուք և երկուք վրկայիւք » (Ս Տիմ. Ե, 19): — Պաւղոս և Բառնաբաոս կ'այցելեն ի Լիւստրա, Եփեսոս և Անտիոքիա ընակող քրիստոնէից, և « ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցեաց երիցունս » (Գրծ. ԺԴ, 20-22): Ուրեմն նոյն տեղեաց երիցունք իշխանութիւն չունին իրենց երիցակիցներ ձեռնադրելու, և եպիսկոպոսաց զաւստեան կը կարօտէին: Յիշեալ եպիսկոպոսաց գործն է դարձեալ՝ « հովուել զժողովուրդ Տեառն » (Գրծ. Ի, 28), հաւատոց ուղղութեան և բարուց սրբութեան հսկել (Ս Տիմ. Գ, 2.-Բ Տիմ. Դ): — Գործ ալ կայ որ երիցուն յատուկ է, զոր օրինակ Ս. Խորհրդոց մատակարարութիւնը. « Հիւանդանայց՝ որ ի ձէնջ, կոչեսցին զերիցունս եկեղեցւոյն, և արաւցեն ի վերայ նորա սղօթս, օծցեն ի խղով յանուն Տեառն » (Յակ. Ե, 14): Մէկ հիւանդի գնացող և մէկ եկեղեցւոյ սեպչական երիցունք անտարակոյս քահանայք են. զի եպիսկոպոս ամբողջ վիճակին վրայ մի միայն էր, ինչպէս վերը տեսանք:

Ահա ուրեմն Նոր կտակարանի մէջ իսկ եպիսկոպոս և երիցունք. մին ընդհանուր զուլիս, միւսները մասնականք. մին ձեռնադրիչ, միւսները ձեռնադրեալք. մին դատաւոր, այլը դատեալք. մին վարդապետ և ուղղիչ, այլը մատակարարք խորհրդոց, կարգի և պաշտաման այս սահմանք ինչ բանով կը զանազանին այժմեաններէն: — Եթէ խորհուի՝ թէ եպիսկոպոսի և երիցու տարբերութիւնը պատուոյ միայն զանազանութիւն էր հող և ոչ աստիճանի, ինչ որ անհաստատելի է տրամաբանութեամբ և

1. Երեց քառն ըստ ընդի իմաստին նշանակելով ձեր կամ ձեռն հասակաւ կամ պատուով, և Նոր Կտեմ. մէկ սովորաբար քահանայից արւելով, ինչպէս յարկից

վկայութեանց մէջ, մերթ եպիսկոպոսաց ալ ընծայուած է, ինչպէս և Յով. Բ և Գ թղթոց մէջ, նման մեր քահանայ քառին:

հին աւանդութեամբ այն ժամանակ նոյնը կարելի պիտի լինէր ըսել նաեւ երիցու և սարկաւագի համար աւ. զի սա եւս ձեռնադրութիւն ունէր միւսին պէս (Գրծ. Զ, 6): Ամէն բան կարելի է ըսել, բայց ամէն բան չէ կարելի ապացուցանել:

Առաքելոց թղթերէն ոչ նուազ յարգի է մեզ անոնց կենդանի մէկ թղթոյն, Անոնց աշակերտին՝ Ս. Իգնատիոսի վկայութիւնը, որ ոչ միայն կը զատէ եպիսկոպոսը երէցներէն, այլ և ցուցնելու համար առաջնոյն գերազանցութիւնը, զայն կը համեմատէ Աստուծոյ հետ, և երիցունքն՝ առաքելոց. « Համարեցէք եպիսկոպոսը ձեր ժողովոց մէջ իբրեւ Աստուծոյ տեղը բռնող. երիցունքը՝ իբրեւ Առաքելոց մեծափառ ծերակոյտը կազմող. և սարկաւագները՝ զորս այնքան կը սիրեմ՝ իբրեւ պաշտօնեայք Քրիստոսի » (Թղթ. Մագնիս. Զ): Կը ցուցնէ դարձեալ՝ թէ եպիսկոպոսութիւնն աստուածադիր աստիճան մ'է. « Ինչպէս Յիսուս Քրիստոս, մեր անբաժան կեանքը, հրամանաւ Հօր՝ կարգեցաւ բոլոր Եկեղեցւոյ վրայ, նոյնպէս եղան եպիսկոպոսներն Յիսուսի հրամանաւ՝ երկրիս զանազան մասանց մէջ » (սա Եփես. Գ): Սոյնպիսի վերակայութեամբ լի են Առաքելոց այս աշակերտին թղթերը, — չյիշելով քան զինք փոքր ինչ կրտսեր՝ Ս. Կղեմ. Աղեքսանդրացւոյ, Իրենէոսի, Տերտուղիանոսի և այլոց վկայութիւնքը, — որոնք այնքան յստակօրէն ցոյց կու տան՝ թէ նուիրապետական երբեակ աստիճանաւորութիւնն ստուգիւ առաքելական է: Եւ ես անգամ մ'ալ իրաւունք կ'ունենամ կրկնելու՝ թէ ասոր զոյութիւնը հայ և ընդհանուր եկեղեցւոյն մէջ նախնական է:

Հ. ՎԱՐԿԱՆ, ՀԱՅՈՒՆԻ



Մ Ի Ս Ա Յ Է Լ

ՀԱՅ-ԱՂԱՌԱՆԻՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Բոլոր անոնք որ նախնեաց գրուածներ հրատարակած են՝ չեն մոռցած յառաջաբանին մէջ յիշատակել թէ հիներէն հասած ամէն նշխար և նշմար՝ արժանի է մեր ուշադրութեան և յարգանքին: Սոյն զգացումը միայն պէտք է շարժառիթ համարել ներկայ գրուածիս հրատարակութեան, շատ աննշան մնացած, որ չունի կարեւորութիւնը՝ ոչ ժամանակագրի մը և ոչ բանաստեղծի մը: Այսու հանդերձ՝ որքան ալ իր ազդեցութեամբը տկար, այս ճառը կրնայ՝ իբրեւ վաւերաթուղթ մը, քանի մը գիծեր աւելցնել իր ժամանակի ոգւոյն վրայ, քանի մը տեղեկութիւններ մեր մատենագրութեան վրայ, և քանի մը բառեր մեր բանասիրաներուն մէջ:

Իժմախոսարար այս ճառէն մեր ձեռագրատան մէջ միայն մէկ օրինակ կայ, որով մէկ երկու խօսքերու մութ ընթերցումները անուղղելի կը մնան: Օրինակը կը գտնուի մեր Գ. ճառերնորին մէջ. զոր Մկրտիչ ոմն որդի Ղազարի գրած է « Ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Սրբոյն Յակոբայ, ի Թուին Հայոց ՌծՁ » (1567): Կ'երեւի թէ առհասարակ շատ ծանօթ չէ եղած թէ՛ ճառս և թէ՛ հեղինակը, որուն անունն իսկ կը պակսի Վիեննայի Մխթարեան Հայոց գրչագիրներու ցուցակին մէջ: Մինչև հիմայ հեղինակին վրայ այնչափ տեղեկութիւն կար՝ որչափ որ կը պարունակէր իր ճառին վերնագիրը, որ հետեւեալն է. Երաւնայն Մխայիկ Հայոց եպիսկոպոս, Մեծի կողմանց և Քոստոքիսոսնայ նահանգին, ի սուրբ Խայն Քրիստոսի: Հ. Մ. Ագաբեան, որ Հայկազեանի համար գործածներ էր սոյն ճառը, գիտէ միայն՝ թէ է « Մխայիկ եպիսկոպոսի, յայնպստ դարու, ճառ գովելի ի սուրբ Խայն, վայե-